

— ի՞նչ կը խօսիս . դու դեռ հայր չես , պարոն : թէ որ իմ պզտիկ Անտոնիկս որ դեռ կաթ կը ծծէ , կայսրութեան շահուն համար , որուն գրեթէ տարեկից է կաթէ կտրուելու ըլլար . . . Տէր Աստուած : Բայց լուռ կեցիր . Ֆէնէս դրէլլոյի մէջ կ'ուզեմ որ բանալիները միշտ գոտիէսկախուած ու բարձիստակն ըլլան :

— Ի՞նչ է հիմա այս յանդուգն դաւաճնին զբաղմունքը :

Բանտապանը կէս հենդնական դէմքով

— Ճ'անճորառութիւն կ'ընէ , ըաւ :

— Խենդ է ուրեմն , պոռաց Շարնէ :

— Ինչու խենդ , պարոն կոսն : Դու որ իրմէ շատ վերջը հոս մոտար , կրնայ ըստիլ թէ փայտի քանդակագործութեան արհեստին մէջ վարպետ ելար : Համբերաբիշն :

Բանտապանին վերջի խօսքերն ալ թէ պէտ և հենդնական էին , բայց Շարնէ նորէն սկսաւ ձեռագործն առաջ տանիլու խորհրդաւոր տառերու ձեերը լուծել . սակայն աս ալ միշտ տիսուր զեղմ' էր զգացած սաստիկ նեղութեանը դէմ : Ասանկ տղայական զբաղմունքներով ու ձանձրութեամբ ամբողջ ձմեռն անցուց . բարեբաղդաբար քիչ ատենէն նոր զբաղմունք մը պիտի բացուէր առջել :

Կը շարունակուի:

---

Մարդուս և կապիկի կազմուածքին մէջ զանազանութիւն մը .

Բնապատումք ոմանք խոնարհութեան քողովծածկած անհնարին հպարտութեամբ մը ուղեցին սերտ ցեղակցութիւն մը հաստատել մարդուս և կապիկի մէջ . ամեն կենդանի նուաստագունէն սկսած կարգի մը վրայ առնլով՝ ըսին , թէ շարունակ կատարելագործութեամբ մը կրնան փոխուիլ 'ի կապիկ , և կապիկն ալ 'ի մարդ :

Այս դրութիւնս կ'եղծանէ զարարչագործութիւնը , և ըստ օրինաւոր հետեւման դԱ-

րարիչն իսկ . և սակայն այսպիսի վարեմամբ իշխեց նիւթապաշտ մը ըսել թէ 'ու և է երկնից և երկրի երեսութիւներու մեկնութեան ամենենին պէտք չունի :

Այս դրութեան դէմ նոր ցոյց մը ըրաւմօտերս Պ . Կրասիոլէ , համեմատելով մարդուս բազուկը և գաստակը տափափոր մեծ կապիկներուն ծղեաց և գաստակներուն հետ . յայտ է որ բնապատումք այս կապիկները մարդակերպ կ'անուանեն :

Անդամագննութիւնն ծանոյց կ'ըսէ Պ . Կրասիոլէ մարդուս և մեծագործ կապիկն մէջ մեծ և այլատիպ տարբերութիւններ : Կապիկներուն բոյթ մատն կը ճիի խոտորնակի բաժանմամբ այն ընդհանուր ջղին ձգմամբը որ վմիւս մատերը կը շարժէ . ըսել է որ անոնց բոյթ մատն չունի մասնաւոր ազատութիւն մը՝ ընդհանուր ձգման շարժմանց հպատակելով . . . Երբէք կապիկի մը թաթին վրայ չէ երեցած այն մեծ ազատ ջիղը՝ որով մարդուս բոյթն կը շարժի : . . . Ըստ այսմ կապիկներուն ձեռաց կազմութեան մէջ մարդկային ձեռք ձեացընելու նշմարանք մը չկայ : . . . Աւելի ալ հնդիկ Օրանկին ձեռաց և ոտից վրայ կը տեսնուին զգալի թերութիւններ , որ ըստ արտաքին երեսութիւն աւելի կը նմանի մարդու :

Այս անհամաձայնութիւնն , այսինքն այն անզուգութիւնն որ կայ մարդուս և մեծ կապիկն նմանակերպ գործարանաց կազմութեան մէջ , ինչպիսիք են ուղեղն և ձեռքն , բացայատ կը ցուցընէ որ տարբեր յարմարութիւններու և այլ և այլ նըսպատակներու համար եղած են . ամենայն ինչ կապիկն ձեռյն մէջն իբրև մասնաւոր պատճառ՝ ունի մէկ նիւթական պատշաճութիւն մը առ աշխարհս . ընդհակառակն ամենայն ինչ մարդուս ձեռյն մէջ կը ցուցընէ գերազանց պատշաճութիւն մը մտաւորական վախճանի :

Այս յարմարութիւններն և տարբեր նպատակներն առաջ կը բերեն մարդուս կերպարանաց մէջ գեղեցկութիւն մը , որուն նման չկայ 'ի բնութեան , և առ որ կրնանք ըսել առանց չափազանցութեան թէ կենդանական տիպն կ'այլակերպի 'ի նմա :